

ԲԱԲԱՅԱՆ ԲԵՐԴ

ՈՐՍ

Կրակիր, իմ ընկեր,
երբ մեջքս քեզ կանեն,
կրակիր՝
իբր պատահաբար,—
ես իմ խոստովանագրքի մեջ
գրել եմ արդեն,
որ եղել է մի այդպիսի
անմեղ պատահար:

Յետո հրացանդ վառ կանաչ կներկես՝
կբացվեն բոլոր ճանապարհները քո առաջ.
Կանգնիր տապանաքարիս վրա, իմ ընկեր,—
երջանկությունը կգա ընդառաջ:

Կրակիր,
կրակիր, ընկեր իմ ազնիվ,
կրակիր, որ շուրթերից քո
էլ չլսեն հավատարմության երդումներ,
ու թե մեջքս քեզ չանեն տիրաբար,
ես
քեզ՝
էլ ի՞նչ ընկեր...

* * *

Կառապանը ծիերին է սանձել,
անիվը՝ ճաղերին:
Կառապանը շտապում է հորիզոնին հասնել,
անիվը՝ կառապանին:

Կառապանը սլանում է... տեղում նստած՝
ծին ծիուց է տքնում անցնել,
անիվը շրջադարձը շրջադարձին է գումարում՝
ճաղն է ջանում ճաղից
առաջ անցնել:

Կառապանը ծիերին է խաբել,
անիվը՝ ճաղերին,
իսկ նա,
ով հնարել է կառքն այս,
և՛ անիվին է խաբել,
և՛ կառապանին...